Հերմինե Կարապետյան
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ, 3-րդ կուրս
Գիտ. ղեկ՝ պ. գ. թ., դոց. Է. Զոհրաբյան

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՐԱԲ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1914-1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի դաշնակից պետությունների՝ Գերմանիայի, Աստրոհունգարիայի և Բուլղարիայի արխիվներում պահվում էին այնպիսի նյութեր, որոնք հաստատում էին 1915 թ. Թուրքիայի կողմից իրականացված ցեղասպանության իրողությունը: Այդ նյութերը պահվում էին դաշնակից երկրների արխիվներում, ուստի վերջիններս չէին կեղծի փաստաթղթերը իրենց դաշնակից պետության դեմ:

Հայոց ցեղասպանության փաստերի լուսաբանմանն է անդրադարձել նաև գերմանացի Հայնրիխ Ֆիրբյուխերը: Նա բացահայտել է մարդկության պատմության մեջ դեռևս չիրականացված ոճրագործության փաստերը: Հայկական մղձավանջային իրադարձությունների ականատեսը՝ Ֆիրբյուխերը, իր պարտքն է համարել համաշխարհային հանրությանը իրազեկել իր տեսած ու վերապրած իրադարձությունների մասին: 1915 թ. Ֆիրբյուխերը դարձավ Թուրքիայում իր ռազմակայանը հիմնած գեներալ Լիման Ֆոն Զանդերսի թարգմանիչն ու համհարզը: Թարգմանչի պաշտոնը նրան ստիպում էր 1915-1918 թթ. հայտնվել Թուրքիայի տարբեր շրջաններում և սեփական աչքերով տեսնել հայոց ողջակիզումը և բռնագաղթեցումը: Մինչ Ֆիրբյուխերը շատ քչերն էին բացահայտ ու փաստարկված մերկացնում մեծ տերությունների նենգ ու հանցագործ քաղաքականությունը հայոց եղեռնի հարցում: Ֆիրբյուխերի գնահատականը հատկապես անողոք է Օսմանյան կայսրության կառավարողների՝ երիտթուրքերի և կայզերական Գերմանիայի կառավարության նկատմամբ: Ֆիրբյուխերն իր այս տեսակետը հիմնում է անվիճելի ապացույցների վրա, որոնք առարկության ենթակա չեն, քանի որ իր պաշտոնի բերումով նա իմացել է շատ ավելին, քան հասարակ մարդիկ: Այս տեսակետը միաժամանակ լուրջ քայլ է հայոց ցեղասպանության պատմության արդի թուրք կեղծարարների և արևմուտքում նրանց գրչակիցների դեմ, որոնք այսօր էլ ապարդյուն ճիգեր են թափում Հայոց ցեղասպանության մեղքը բարդել հենց իրենց՝ հայերի վրա, կամ էլ ժխտել հայ ժողովրդի ցեղասպանության բուն փաստը:

Պատմաբանների և հրապարակախոսների համար դժվար է համախմբվել Ֆիրբյուխերի քննադատության դեմ, քանի որ նա ոչ միայն իրադարձությունների սոսկ ականատեսն էր, այլև գեներալ

Լիման Ֆոն Զանդերսի՝ 1913-1918 թթ. Թուրքիայում գերմանական զինվորական առաքելության գլխավորի, իսկ 1915-1916 թթ. թուրքական հինգերորդ բանակի, այնուհետև 1917-1918 թթ. Պաղեստինում թուրքական զորախմբի հրամանատարի համհարզը և թարգմանիչն էր: Այդ պատճառով էլ կեղծարար պատմաբանները թե՛ այն ժամանակ, թե՛ այսօր ստիպված են շրջանցել, «չնկատել» նրա մերկացումները: Ֆիրբյուխերը քաջատեղյակ էր գերմանական և թուրքական մյուս զինվորական ու քաղաքացիական անձանց գործերին, ինչպիսին էր օրինակ գերմանացի մարշալ Ֆոն Դեր Հոլցը՝ «թուրքական բանակի հայրը» [1]: Ֆիրբյուխերի վկայությամբ Հոլցը չէր դիմացել հայոց կոտորածի սարսափելի տեսարանի առջև և 1915 թ. նոյեմբերի 22-ին Հալեպից հայտնել էր Բեռլին. «Հաջորդ օրը՝ առավոտյան, անցանք գլխավոր թունելը և դուրս եկանք հյուսիս-սիրիական ցածրություն: Այստեղ մեր հայացքին ներկայացավ սրտաճմլիկ մի տեսարան՝ փախստական հայերը, տեղավորվելով Տավրոսի հարավային ստորոտին, գտնվում էին անելանելիության վիճակում... Մի ամբողջ ժողովրդի սարսափելի ողբերգություն: Հազարավոր անպաշտպան մարդիկ առանց պարենի, առանց մատակարարման ընթանում էին ահայտ նպատակին ընդառաջ: Շատերը մահանում էին ճանապարհին և նրանց դիակները ընկած էին ճանապարհների եզրերին»[2]:

Ֆիրբյուխերը առաջինն էր, որ աներկբայորեն դրեց սեփական կառավարության՝ Գերմանիայի մեղսակցության հարցը՝ արդարացիորեն մտրակելով գերմանական քաղաքականության ներքին վիճակը, որի համար նշանակություն ունեին «միայն շոշափելի թվերով հաշվարկվող առևտրական հաշվեկշիռները, իսկ մարդասիրության պահանջները մեծամիտ ժպիտով մի կողմ էին նետվում»: Նա նշում է, որ Գերմանիայում մարդիկ սխալ կարծիք ունեին թուրքերի մասին և պատերազմի ընթացքում պարզ պատկերացում չունեին հայոց եղեռնի մասին: «Համարձակվում եմ պնդել,որ պատերազմի բոլոր տարիների ընթացքում Գերմանիայում այդպես էլ չպատկերացրին, թե ինչ չափով է Թուրքիան մասնակցում ռազմական գործողությունների: Դրա փոխարեն գունագեղ պատկերներ էին գծագրվում: Մեր մամուլը, լրագրողների ամբողջ բանակը հույսերը դրել էին ալադինի լապտերի կախարդական ազդեցության վրա: Էնվերին Զիգֆրիդ էին գծագրել, Թալեաթին՝ Բիսմարկ, իսկ թուրքերն իբր միակ ժողովուրդն էին, որ աշխարհի ստեղծումից ի վեր մեր կողքին պատերազմելուց ավելի նվիրական փափագ չեն ունեցել»[3]: Պատռում է գերմանական կեղծ

[1] Ֆիրբյուխեր Հ., Հայաստան 1915, Երևան, 1995, էջ 15:
[2] Նույն տեղում, էջ 17-18:
[3] Նույն տեղում, էջ 17:

դեմոկրատներ Նաումանի, Ռոհերբախի, էկխի դիմակները և ցույց տալիս, որ իրականում նրանց գովաբանած երիտթուրքերը մարդասպաններ են: Ֆիրբյուխերը գտնում էր, որ երիտթուրքերը չունեին գաղափար, պայքարում էին ոչ թե հանուն ժողովրդի, այլ առանձին անձանց իշխելու իրարատենչ ցանկության համար: Եվ երիտթուրքերի մասին արտահայտվում է հետևյալ կերպ. «Բռնություն, բռնություն և դարձյալ բռնություն. ահա թուրքական նշանաբանը: Ինչ է, նույնը նաև մյուս ժողովուրդների մասին չի՞ կարելի արդյոք ասել: Թերևս կարելի է, սակայն աշխարհի ոչ մի երկրում կործանարար ուժերը նման ավեր չեն գործել, սուրը հոգևոր, ստեղծարար մղումներն այդ աստիճան չի ոչնչացրել»[1]:

Նշելով իշխանությունների և դաշնակից երկրների մեղսունակությունը ցեղասպանության իրականացման գործում՝ Ֆիրբյուխերը չի մոռանում նաև թուրք ժողովրդին. «Թուրք ժողովուրդը այս բառի բուն իմաստով, քաղաքակրթված չէ: Լեզուն դեռևս գտնվում է աֆրիկյան գավառաբարբառների մակարդակին, չնայած զինվորական հրամանների համար շատ հարմար է: Թուրքական գրականության մասին չարժե խոսել էլ՝ այն ինչ ստեղծվել է այս բնագավառում, արաբական ու պարսկական ճոխ գանձարանից թոցրածի անշնորհք նմանակումն է... Գիտության համար թուրքական հողում տեղ չկա..., բայց Թուրքիան պատերազմել է, պատերազմել ու դարձյալ պատերազմել: Ասպատակությունների թվով նա կարող է համաշխարհային ախոյանի դափնեպսակ նվաճել: Էֆենդիները եռանդ, նախանձախնդրություններ են ցուցաբերել, երբ կշեռանժարին է դրվել ոչ թե խելքը կամ միտքը, այլ բռունցքը, ահը, սարսափը, ավերման մոլուցքը»[2]: Ոչ մի գերմանացի չի մեղադրել իր կառավարությանն այնպես, ինչպես նա՝ չխնայելով սեփական բռնակալներին, հանուն արդարության հաղթանակի, որ իր ժողովրդին ևս ազատագրի «թագակիր տականքներից, որ ամեն ժողովրդի մեջ էլ կան»[3]:

Թուրքական կառավարությունը իր նենգ ծրագիրը իրականացնելու համար հայ ժողովրդին զրկում է իր ղեկավարներից. «1915 թվականին ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսում, մոտ 600 հայ մտավորականի ձերբակալեցին, քշեցին Անատոլիայի խորքերը: Այդպես ժողովուրդը զրկվեց ղեկավարներից»[4]:

[1] Նույն տեղում, էջ 21:
[2] Նույն տեղում, էջ 25-26:
[3] Նույն տեղում, էջ 29:
[4] Նույն տեղում, էջ 42:

Հայ ժողովրդին պաշտպանվելու հնարավորությունից զրկելու համար թուրքական կառավարությունը տղամարդկանց բանտարկում էր, տեղափոխում այլ վայրեր և սպանում նրանց:

«Դեռևս հունվարից թուրքական կառավարությունը Արևելյան Անատոլիայի հայերին հետևողականորեն հալածում էր: Լրտեսության ու չարտոնված զենք կրելու մեղադրանքները խոշոր գումարներ կորզելու մշտական միջոց էին դարձրել: Բանտերու, հարցաքննության պատրվակով, պաշտոնյաներն ու զինվոր-աստիճանավորները հարյուր հազարավոր հայերի անասելի խոշտանգումների էին ենթարկում, ավելին, նրանք չարագործությունների մասին հերյուրանքներ տարածելով, բորբոքում էին թուրք ժողովրդին:

Սովորաբար նախ շրջապատում էին գյուղերն ու քաղաքները, տղամարդկանցից պահանջում զենքերը հանձնել՝ մի բան, որ շատ քչերի տանը կար, այն էլ, հիմնականում, դեռևս հեղաշրջման ժամանակ երիտթուրքերն էին բաժանել, որ հայերը պաշտպանեն նոր վարչակարգը: Չնայած դրան, ում մոտ հրազեն գտնում՝ կամ տեղնուտեղը գնդակահարում էին, կամ դաժան կտտանքներով մահվան հասցնում:

Տղամարդկանց կապկպում էին իրար, սովորաբար սպանում բնակավայրերից ոչ հեռու, որպեսզի հարազատները նրանց վերջին ճիչերը լսեն, «մխիթարվեն»[1]:

Իսկ Տրապիզոնի տղամարդկանց մասին Ֆիրբյուխերը տեղեկացնում է, որ նրանց լցնում էին բաց ծով դուրս եկող նավերը, որոնք և մի քանի ժամ անց դատարկ ետ էին վերադառնում:

Այնուհետև Ֆիրբյուխերը նշում է բռնի տեղահանության մասին և գրում է. «Եվ ահա Ստամբուլից հասավ կոտորածի հրամանը: Իհարկե, Էնվերն ու Թալեաթը շատ լավ գիտեին «Միջագետք տարագրել վստահություն չներշնչող ընտանիքներին» դարձվածքի ներքին իմաստը: Այդ լերկ, ամայի երկրամասում, կարճ ժամանակամիջոցին, անհնար էր մեկուկես միլիոն հայ տեղավորել, մանավանդ, որ նման քանակությամբ տարագիրներ բնակեցնելու համար նախապատրաստական ոչ մի աշխատանք չի կատարվել: Հայերով համալրել՝ նշանակում էր կրկնապատկել տեղաբնակների թիվը, դրանից բացի, պարզ չէ՞ր, թե ի՞նչ է հետապնդում մի ամբողջ ազգության՝ կանացով, երեխաներով, իրենց հազարամյա հող ու ջրից արմատախիլ անելը, ամառվա կիզիչ տոթին, թալանված, հուսահատության մատնված անպաշտպան զանգվածներին հարյուրավոր կիլոմետրեր լեռնային կածաններով քշելը, քաղցի, ծարավի, հիվանդության տառապանքներին մատնելը: Հենց թեկուզ հարյուր հազարավոր հայի ամիսներ

[1] Նույն տեղում, էջ 40:

շարունակ առանց ծածկի, բժշկական օգնության, տարրական մաքրության թողնելը առնվազն տասնյակ հազարին մահվան դատապարտել չէ՞ր նշանակում»[1]:

Ֆիրբյուխերը անկեղծորեն ափսոսում է, որ թուրքերի իրական դեմքը չէին նկատել շատ հայ գործիչներ, որոնք թվում է իրենց հավատքի և նվիրվածության զոհերը դարձան այն մարդկանց հանդեպ, որոնք շուտով ցույց տվեցին իրենց իսկական դեմքը: Եվ այս մասին նշում է. «1915 թ. նրանք անսառնասրտորեն սպանեցին իրենց հայ բարեկամներին, որոնք 1909 թ. փրկել էին նրանց կյանքը: Նա անժխտելի փաստերով ցույց է տալիս, որ Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում պետական կառավարության հրամանով իրականացված քաղաքականություն էր, որն իրագործում էին կառավարության կողմից հովանավորված քրեածին կիսախելագարները»[2]: Նա նաև գրում է. «1915 թ-ի ապրիլի 21-ին թուրքական կառավարությունը հրաման արձակեց հայ ժողովրդի բնաջնջման մասին և համապատասխան հրամաններ ստացան զինվորական և քաղաքացիական գերատեսչությունները»: Այս հրամանից հետո Ֆիրբյուխերը նշում է. «Հայոց արյան առվակները սկսեցին հոսել ժայռերով մեկ»[3]:

Եվ այնուհանդերձ, այնքան շատ է անընմբռնելին, որ թվում է, «1915 թվականի ողբերգությունը մարդկության պատմության ամենաարյունալի և սահմռկեցուցիչ հանելուկն է, սովորական խելքի համար այն մնում է որպես անլուծելի խնդիր և հենց դա է անտանելին, որի հետ չի կարելի հաշտվել»:

Եվ այսպես, պարզ է դառնում, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարվել է հայերի ցեղասպանությունը և դա արել են երիտթուրքական ղեկավարները՝ ըստ նախօրոք մշակված ծրագրի:

Քննության առնելով Հ. Ֆիրբյուխերի «Հայաստան 1915» աշխատությունը տեսնում ենք, որ վերջինս ներկայացնում է բնակչության բռնի տեղահանման, ունեցվածքի թալանման, բնակչության ֆիզիկական ոչնչացման փաստեր, որոնք համապատասխանում են ՄԱԿ-ի կոնվենցիայով ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործության որակման հատկանիշներին:

Ֆիրբյուխերի անաչառ և անկողմնակալ վկայությունները արդիական են ու կարևոր Թուրքիայի ուրացման և ժխտողական քաղաքականության դեմ պայքարելու համար:

[1] Նույն տեղում, էջ 42:
[2] Նույն տեղում, էջ 33:
[3] Նույն տեղում, էջ 50:

Հիշյալ փաստերից բացի, թուրքական կառավարության անօրինակ ոճրագործությունների մասին կան բազմաթիվ անհերքելի փաստեր և վկայություններ մեծ ողբերգության ժամանակակիցների, ականատեսների հիշողություններում ու աշխատություններում:

Эрмине Карапетян

ГЕНРИХ ФИРБЮХЕР О ВОПРОСЕ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА

Кажды Арменин долен знать всеподробности об Армянском геноциде, чтобы быть в состоянии бороться противотрицания политики Турции...

Об беспрецедентных преступлений правительства Турции, есть много неопровержимых фактов и свидетельств, о так же воспоминаний современников и научних работах. Внашем докладе мы представили сведетельство и оценки немца Генриха Фирбюхера об Армянском геноциде. Как уже упоминалось выше Фирбюхера родом из германии, Германия 1915 г. былаоднойиз стран союзникиом Турции, и вряд ли немец Г. Фирбюхер солгал бы офактах геноцида против союзника. Обратите внимание, что Фирбюхер не был простим немцом, но он был переводчиком маршала Лиман Фон Зандерс, что делает егоболее убедительные его доказательства (сведетельство). Внашем докладе мы представили факты, записанные Фирбюхером об принудительной депортации армянского народа, ограблении имущество, физического уничтожения жителей, которы ООН принялкак фактов о геноциде.

Hermine Karapetyan

HAYNRIX FIRBYUXER SPEAKS ABOUT THE GENOSIDE

Each Armenian must know about the facts connected with the Armenian genoside to be able to defend against the Turkish denial policy with the help of those facts. There are many incontestable facts and testimonies about the Turkish government's crime in the memories and works of the genoside's vitneses.

In our report we have presented the testimonies of German Haynrix Firbyuxeri about the Armenian genoside. As we said above Firbyuxer was German and Germany was one of the countries that were

aly with Turkey in 1915 and he wouldn't falsify the facts against their aly country. We must note that Firbyuxer was not a usual German, but the translater of the general Liman Fon Zandersi. And this fact makes his testimony more serious.

In our report we have spoken about Firbyuxer's recorded facts about Armenians' forcible deportation plunding of their properties,about the physical annhilitation of the population, which are the features of the genocide recognized by UN.